ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/17039-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-786-28.02.2024-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 442-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության ավագ մասնագետ
Հեռ. 010 515 403 077 78 78 21

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (**Պ**-786-28.02.2024-**ՊԻ**-011/0) **ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

ՀՀ ԱԺ պատգամավոր Արփինե Դավոյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Օրենքի նախագիծ) առաջարկվում է ՀՀ գլխավոր դատախազին լիազորել նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը նախաքննության մեկ այլ մարմնի հանձնարարել ոչ միայն իրականացվող նախաքննության անաչառությունն ապահովելու, այլ նաև քննության համակողմանիությունն ապահովելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ քննարկվող լիազորության անհրաժեշտությունն ընդհանուր առմամբ առկա է, սակայն Օրենքի նախագծի համապատասխան դրույթը պետք է այնչափ հստակ և որոշակի ձևակերպում ունենա, որ կարողանա արտացոլել կոնկրետ այն իրավիճակները, որոնց դեպքում ՀՀ գլխավոր դատախազը կարող է փոխել ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածով իմպերատիվ կերպով սահմանված քննչական ենթակայությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 8-րդ մասը թողնել անփոփոխ, իսկ նույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին մասով՝

«8.1 Բացառիկ դեպքերում, քրեական վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու նպատակով, գլխավոր դատախազն իրավասու է նաև իր որոշմամբ փոխել քրեական վարույթի՝ սույն օրենսգրքով նախատեսված քննչական ենթակայության կանոնները, եթե քրեական վարույթը փաստական հանգամանքներով կապված է նախաքննության մեկ այլ մարմնի վարույթում քննվող քրեական վարույթի հետ, կամ քրեական վարույթը նախաձեռնվել է նախաքննական մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող նախաքննության ընթացքում հայտնաբերված ենթադրյալ՝ այլ քննչական մարմնին ենթակա հանցագործության հատկանիշներով, սակայն փաստական հանգամանքներով կապված է վարույթը նախաձեռնած քննիչին ենթակա վարույթի հետ կամ նույն հիմքով միացվել է այդ վարույթին»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N 442-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լեզվին ժողովի կանոնակարգ հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի տեղում կա Կիմեռի հարցերին նշանակել Հայաստանի Հանրապետություն Լեզվին ժողովում «Հայաստանի Հանրապետության քերականությունը դասավորության գենոգրաֆ|ոցում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (ՊՀ86-28.02.2024-ՊՄ011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հրավիրվում է):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Երևան

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ
13.05.2024

Պ-786-28.02.2024-ՊԻ-011/0
ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 8-րդ մասում «անաչառ նախաքննություն» բառերից առաջ լրացնել «համակողմանի եւ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 1-ին մասի եւ 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝

«1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով՝

(...)

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Գլխավոր դատախազը ղեկավարում եւ վերահսկում է դատախազության գործունեությունը եւ պատասխանատու է դատախազության բնականոն գործունեության ապահովման համար:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 17-րդ մասի (սույն մասով սահմանվում են 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը գործող քննչական ենթակայության կանոնները) 13-րդ կետի համաձայն՝ բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա, որպես վերջին միջոց,

անհրաժեշտ է պատշաճ, համակողմանի եւ անաչառ [ընդգծումը մերն է] նախաքննության կատարումն ապահովելու համար:

2024 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող՝ քննչական ենթակայության կանոնները սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա, որպես վերջին միջոց, անհրաժեշտ է անաչառ [ընդգծումը մերն է] նախաքննության կատարումն ապահովելու համար:

Ինչպես բխում է վերոշարադրյալ կարգավորումներից, 2024 թվականի հունվարի 1-ից ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ իրավասությունը՝ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը նախաքննության մեկ այլ մարմնի հանձնարարելու վերաբերյալ, սահմանափակվելու է բացառապես իրականացվող նախաքննության անաչառությունն ապահովելու նպատակով: Մինչդեռ, իրավակիրառ պարկտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ շատ ավելի հաճախ ՀՀ գլխավոր դատախազի՝ վերոշարադրյալ բացառիկ լիազորության իրականացման հիմք է հանդիսանում ոչ թե քննության անաչառությունը, այլ քննության համակողմանիությունն ապահովելու հրամայականը: Դիցուք, կոռուպցիոն հանցանքների վարույթներով հնարավոր են դեպքեր, երբ տեւական ժամանակ քննված քրեական վարույթով բացահայտվի կոռուպցիոն հանցանք, ապա ՀՀ գլխավոր դատախազը, որպես քննության համակողմանիությունն ապահովելու վերջին միջոց, դրա նախաքննության կատարումը կարող է հանձնարարել այդ քրեական վարույթով ի սկզբանե նախաքննություն իրականացրած քննչական մարմնին: Այլ խոսքով, քրեական վարույթի ընթացքում կարող են ի հայտ գալ այնպիսի հանգամանքներ, որոնք ողջամիտ կասկածներ կարող են առաջացնել տվյալ նախաքննական մարմնի կողմից համակողմանի նախաքննություն կատարելու վերաբերյալ, որպիսի պայմաններում, ՀՀ գլխավոր դատախազը, ըստ էության հանդիսանալով մինչդատական վարույթի օրինականության համար պատասխանատվություն կրող բարձրագույն պաշտոնատար անձը, պետք է օժտված լինի բավարար գործիքակազմով՝ քննության օրինականության անհրաժեշտ բաղադրիչ հանդիսացող համակողմանիությունն ապահովելու համար:

Ընդ որում, հարկ է արձանագրել, որ եթե ՀՀ գլխավոր դատախազի համապատասխան լիազորությունը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասը չէր նախատեսում ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան որոշման կայացում, ապա ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 181-րդ հոդվածը նախատեսում է ՀՀ գլխավոր դատախազի կողմից համապատասխան որոշման կայացում, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետք է լինի օրինական եւ հիմնավոր:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 8-րդ մասում կատարել լրացում՝ ՀՀ գլխավոր դատախազին հնարավորություն ընձեռելով նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող քրեական վարույթով նախաքննությունը շարունակելը նախաքննության մեկ այլ մարմնի հանձնարարել ոչ միայն իրականացվող նախաքննության անաչառությունն ապահովելու, այլ նաեւ քննության համակողմանիությունն ապահովելու նպատակով:

3. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ՀՀ գլխավոր դատախազի համար կապահովվի անհրաժեշտ գործիքակազմ քննության համակողմանիությունը եւ անաչառությունն ապահովելու համար: